ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հունվար ամսվա վերջի դրությամբ)









2023թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 222.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 5.7%-ով, իսկ 2021 թվականի հունվարի 31-ի նկատմամբ աճելով 1.5%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 1.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.8%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 5.9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով 2.6%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 221.3 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.3%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2.5%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2,6%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 667.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.3%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 14,9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 32.9%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 108 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.2%-ով, 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 14,7%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 34,3%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 559,1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.4%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 18.9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 11.9%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 339.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.8%-ով, նվազելով 2022թ. հոունվարի 31-ի նկատմամբ՝ 21.6%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 18.9%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 662 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 31.1%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 63.9%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 221.3 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.3%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2.5%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 2,6%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 909.9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.2%-ով, նվազելով 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 4.4%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով 6.1%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 198.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.3%-ով, 2022թ. հհունվարի 31-ի նկատմամբ՝ 59.8%-ով, իսկ 2021 թ հունվարի 31-ի նկատմամբ՝ 114.6%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 559,1 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.4%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 18.9%-ով, իսկ 2021թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 11.9%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 535.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.7%-ով, 2022թ. հունվարի 31-ի նկատմամբ՝ 1.6%-ով, իսկ 2021թ. հոունվարի 31-ի նկատմամբ նվազելով 2.1%-ով:

2023թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.66%, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.04 տոկոսային կետով, 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ 0.09 տոկոսային կետով, 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ 0.52 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.03%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.05 տոկոսային կետով, 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ 0.04 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ՝ 0.39 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.31, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.01 տոկոսային կետով, 2022թ. հոունվարի 31-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշից պակաս է 0.13 տոկոսային կետով:

2023թ. հունվարին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 7.74 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.23 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.43 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 0.63 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0.14 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.42 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 7.11 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.09 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.01 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվարին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է -1.37 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 25.83 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 7.85 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 4.11 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 25.98 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 10.53 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -5.48 մլրդ դրամ, ինչը ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.15 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 2.68 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվարին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 4.3 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 26.1%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8.3%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 14.44 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.6%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.7%-ով,

3) ստացվել են 0.97 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 55.5%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 10.2%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 18.74 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8.8%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 8.7%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2023թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 501,4 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 5.1, 256.1 և 525.7 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3173 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 31 օրով, 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 581 օրով, իսկ 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է 767 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 6.28%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ պակաս է 0.01 տոկոսային կետով, 2022թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է 1.54 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է 1.96 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. հունվարի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.64%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար 0.02, 1.58 և 1.56 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 12,94%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.11 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 4.04 և 6.01 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 84.42%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0,09 տոկոսային կետով, իսկ 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 5.62 և 7.57 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. հունվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 7.65 տարի: Այս ցուցանիշը 2022թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.73 տարով, իսկ 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշից՝ 1.06 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է12.95%, որը 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից մեծ է 3.6 և 2.23 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.49%, լողացող տոկոսադրույքով՝ 16.51%: Ընդ որում, 2023թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. հունվարի 31-ի ցուցանիշից ավել է 0.44 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշից ավել է 3.01 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 58.47%, ներքին պարտք՝ 41.53%: Ընդ որում, 2023թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. հունվարի 31-ի և 2021թ. հունվարի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 11.72 և 15.53 տոկոսային կետերով: